



2013 Համաշխարհային Թատրոնի Օրուան Առթիւ

Տարիօ Ֆօ-ի Պատգամը

Երկար ժամանակ առաջ, չհանդուրժելով Commedia dell'Arte-ի գոյութեան, իշխանութիւնը երկրէն վտարեց թատերախումբի դերասանները:

Ներկայիս ալ բազմաթիւ դերասաններ եւ թատերախումբեր, հանդիսատես եւ հանդիսասրահ գտնելու դժուրաթիւն կ'ապրին: Պատճառը ճգնաժամն է:

Այդ պատճառաւ ալ իշխանութիւնը երգիծանքով իրենց ձայնը լսելի դարձնել փորձողները հակակշռելու հոգ մը չունին: Որովհետեւ դերասանները ո՛չ գործելու վայր ունին, ո՛չ ալ զիրենք լսող հանդիսատես: Մինչ Վերածնունդի շրջանի Իտալիոյ իշխանութիւններուն համար խնդիրը բաւական բարդ էր, քանի որ դերասանները հանդիսատեսներու ահագին զանգուած մը ունէին:

Commedia dell'Arte-ի երկրէն վտարումը կը զուգադիպի հակաբարելաւման շրջանին: Այդ տարիներուն իշխանութիւնը հրամայեց պարպել բոլոր թատերասրահները, յատկապէս ալ Հռոմիները: Թատրոնները մեղադրուեցան քաղաքը սրբապղծելով: Պապ Իննտսան ԺԲ. 1697-ին, յօժարեցաւ պահպանողական քաղքենիներու եւ հոգեւորական դասու պահանջներուն, հրամայեց փլել Թորտինոնէի թատրոնը: Բարոյական արժանիքներու պահապաններու համաձայն՝ ամենակտի ներկայացումները հոն կը բեմադրուէին:

Հակաբարելաւման շրջանի կարեւոր գործիչներէն՝ Կարտինալ Գարլօ Պորումեօ իր աշխատութիւնը խտացուցած էր հիւսիսային Իտալիա: Նպատակադրած էր «Միլանոյի Տղաքը» կոչած ժողովուրդը փրկել իր գործած մեղքերէն: Համոզուած էր, որ յստակ բաժանում մը կայ արուեստի եւ թատրոնի միջեւ: Առաջինը կը համարէր հոգեկան դաստիարակչութեան բարձրագոյն միջոցը, իսկ երկրորդը՝ սրբութիւններէ հրաժարիլ ու անհատական կիրքերու գոհացման ծառայող ունայնութիւն: Համախոհներուն ուղղած նամակով իր տեսութիւնը կը պարզէր մօտաւորապէս հետեւեալ տողերով.- «Այս վնասակար բոյսը արմատախիլ ընելը մեր խնդիրն է: Մեծ եռանդով այրեցինք խայտառակ գրոյցներ պարբակող գրութիւնները: Ժողովուրդի յիշողութենէն ջնջել ջանացինք: Հետապնդեցինք այդ գրութիւններու հեղինակները: Բայց ըստ երեւոյթին, նախքան մեր զարթումը, սատանան նոր խորամանկութիւններ հնարած է: Աչքով տեսնուածը շատ աւելի խորաթափանց է, բաղդատմամբ ընթերցուածին: Գիրքերու մեռեալ բառերը ի՞նչ նշանակութիւն ունի բեմին վրայ կենդանի արտասանուածին քով: Հետեւաբար ինչպէս որ մեր քաղաքները մաքրեցինք չար ոգիներէն, այդպէս ալ պէտք է մաքրենք դերասաններէն»:

Կ'երեւի թէ մերօրեայ ճգնաժամերը յաղթահարելու միակ յոյսը մեզ վտարելու արշաւ մը կազմակերպել է: Այդ արշաւը, յատկապէս ալ պիտի ուղղուի թատերական դպրոցի ուսանողներուն: Վերջին հաշուով վտարուած դերակատարներէ գոյացած Քոմմէտիանթիի սփիւռքը նման ճնշումներէ ներշնչուելով՝ նորանոր ներկայացումներ պիտի ստեղծեն: